Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԲՈՍՏՈՆՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱԿՈԹՈՂԻ ՀԻՄՆՕՐՀՆԵՔԻ ԱՌԻԹՈՎ

(Բոստոն, 9 սեպտեմբերի, 2010 թ.)

Սիրելի զավակներ Մեր,

Առ Ամենակալ հոգեբուխ աղոթքներով այսօր կատարեցինք Բոստոն քաղաքի այս գեղատեսիլ վայրում կառուցվելիք Հայոց Ցեղասպանության հիշատակին նվիրված հուշարձանային կոթողի հիմնօրհնեքի արարողությունը:

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ամենքիդ, եւ Մեր բարձր գնահատանքը այն բոլոր անձանց, ովքեր միասնական եռանդուն աշխատանքով կարողացան իրականություն դարձնել այս կարեւոր ձեռնարկի իրագործման մտահղացումը: Այսօր աշխարհում Եղեռնին նվիրված բազմաթիվ հուշարձաններ կան, որոնց հավելվելու է նորոգ կառուցվելիք այս հուշակոթողը՝ նաեւ արվեստի ու բաց երկնքի տակ վեր հառնող շինության միջոցով հնչեցնելու պահանջը հայոց Արդար Դատի, պահանջը Հայոց Ցեղասպանության համընդհանուր դատապարտման:

Քսաներորդ դարի արշալույսին էր, երբ մեր ժողովրդի խաղաղ ու ստեղծարար կյանքի ընթացքը խաթարվեց Թուրքիո կառավարության կողմից կազմակերպված ցեղասպանությամբ: Այսօր մենք պայքարում ենք մեր ազգի եւ մարդկության դեմ գործված ոճրագործության միջազգային ճանաչման ու դատապարտման համար, որպեսզի հաստատվի արդարությունը, եւ ողջ աշխարհում եղեռնագործությունների, պատերազմների մերժումով հաղթանակի խաղաղ ու բարօր կյանքի վսեմ ձգտումը մարդկության: Միջազգային ողջ հանրության կողմից մերժումն ու դատապարտումը այսպիսի ահավոր ոճրագործությունների պիտի լինեն այն զորեղ սյուները, որոնք ամուր հենարան են համայն աշխարհի խաղաղության հաղթական կամարի: Դատապարտելի գաղափարախոսություններն ու բռնարարքները մերժող, խաղաղ մարդկանց բնաջնջումի դեմ բողոքի ձայն բարձրացնող ազգերը միայն կարող են համընդհանուր պայքարել եւ հաստատել ժողովուրդների խաղաղ գոյակցության իրավունքը, որի անխաթար պահպանությունը երաշխիքն է մարդկային հասարակության բարօրության ու բարգավաճման:

Սիրելիներ, մենք նախանձախնդրությամբ պիտի շարունակենք մշտահունչ բարձրաձայնել մեր արդար պահանջը, պիտի շարունակենք արիաբար ու անհոգնաբեկ մեր անկախ պետությամբ, մեր առաքելահաստատ Սուրբ Եկեղեցիով, մեր համազգային միասնականությամբ գործունեություն ծավալել, ջանքեր ներդնել, որպեսզի աշխարհը ու նաեւ Թուրքիայի պետությունը ճանաչեն Ցեղասպանությունը, որպեսզի վերահաստատված արդարության հաղթական պսակով բարեզարդվի ազգային-եկեղեցական կյանքը աշխարհասփյուռ հայության:

Ի խորոց սրտի աղոթք ենք բարձրացնում առ Ողորմածն Ամենակալ Հայոց Ցեղասպանության բյուրավոր զոհերի հոգիների հանգստության եւ խաղաղության համար: Այլեւ աղոթում ենք, որ Բարձրյալ Տերը Ցեղասպանությունը վերապրածներին, նրանց սերունդներին եւ աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին պահի ու պահպանի Իր Ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո: Թող Ամենակալը ողջ մարդկությանը ուժ եւ շնորհը տա խաղաղության վերարժեւորումով դատապարտելու Հայոց Ցեղասպանությունը, մարդկության դեմ գործված բոլոր ոճրագործությունները եւ քայլելու խաղաղության շավիղներով:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեսեան. ամէն: